

**1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ**

**1.4.1.Ջրաղվածություն**

Հանրապետությունում տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2003թ. հունվար-հուլիսին<sup>1</sup>, ըստ գնահատման, կազմել է 1404.2 հազ. մարդ, որի 91.0%-ը կամ 1277.2 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.0%-ը կամ 127.0 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2003թ. հուլիսի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 154.1 հազ. աշխատանք փնտրողներից 99.2%-ը կամ 152.9 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 81.7%-ը կամ 124.9 հազ. մարդ:

2003թ. հուլիսին վերոհիշյալ գործակալության կողմից հաշվառման վերցված 1.9 հազ. չզբաղվածներից 1.1 հազարը կամ 57.9%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 2.3 հազ. մարդ, նրանցից 29.3%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

**Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի<sup>2</sup>, 2003թ. հուլիսին**

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2002թ. հուլիսի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2002թ. հուլիսի նկատմամբ, %
ք.երևան	36.0	90.2	32.2	88.2
Արագածոտն	2.3	104.5	1.5	100.0
Արարատ	5.8	84.1	4.4	80.0
Արմավիր	8.5	98.8	5.7	91.9
Գեղարքունիք	8.8	98.9	6.4	97.0
Լոռի	26.9	105.5	21.8	102.3
Կոտայք	8.6	87.8	6.4	86.5
Շիրակ	32.9	97.3	27.3	94.1
Սյունիք	17.0	103.7	14.0	102.2
Վայոց ձոր	2.1	100.0	1.6	94.1
Տավուշ	5.2	113.0	3.6	92.3
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>154.1</b>	<b>97.1</b>	<b>124.9</b>	<b>93.7</b>

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 68.0%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2002թ. հուլիսի նկատմամբ աճել է 1.5%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2003թ. հուլիսի վերջին կազմել է 805 մարդ, այդ թվում՝ 76.9%-ը կամ 619-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 190 չզբաղված մարդ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 2.6%-ով:

<sup>1</sup> Ցուցանիշի հաշվարկման հիմքում դեռևս դրված չեն ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ստացված տվյալները, քանի որ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի ցուցանիշի մշակումն ավարտված չէ:  
<sup>2</sup> ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

2003թ. հուլիսին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվել են 682 մարդ, որոնց 47.7%-ը՝ կանայք:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2003թ. հուլիսին կազմել է 7.2 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3252 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն ստացել են 16.0 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1464 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2003թ. հուլիսին կազմել է 8.9% և 2002թ. հուլիսի համեմատությամբ նվազել է 0.5 տոկոսային կետով, իսկ 2003թ. հունիսի նկատմամբ նվազել է 0.1 տոկոսային կետով: